ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ , ԳԻՏՈՒԹՅԱՆ , ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ N 4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ >>
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

(2023-2028 թթ.)

ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ

ՄԵՐ ԿԱՐԳԱԽՈՄՆ Է՝ ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ , ՀԶՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն

Նախաբան 4

1.Ուսումնական հաստատության գործունեությունը 5-14

2.Ուսումնական հաստատության իրավիճակի վերլուծություն ուժեղ և թույլ կողմեր 15-50

3. Նպատակների և խնդիրների սահմանումը..... 51-53

4. Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողություններն և միջոցառումներն 54-66

5.Յուրաքանչյուրգործողության համար սահմանված ժամանակացույց 54-66

6. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման պատասխանատուները..... 54-66

7.Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման արդյունքների գնահատման չափանիշները 54-66

8. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման համար միջոցները և նյութատեխնիկական պարագաները 54-66

9. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման ռիսկերը 67-68

10 .Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման վերահսկողության մեխանիզմները 69-70

11.Զարգացման ծրագրի կատարման արդյունքի գնահատման չափանիշներ..... 71-72

Նախաբան

<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի N 4 հիմնական դպրոց >> ՊՈԱԿ-ի զարգացման 2023-2028թթ. ծրագիրը մշակվել է՝ պահելով դպրոցում առկա հիմնախնդիրները և դրանց ուղղված հաջողությունների աստիճանական զարգացում : Իմ նպատակն է՝ ծրագրում հստակ և իրատեսական ներկայացնել առկա իրավիճակը ,որի հիման վրա ընդգծելու եմ դպրոցի զարգացման ուղղությունները և դրանց ուղղված ռազմավարությունը : Դպրոցի գործունեության պլանավորումը ներկայացրել եմ ըստ փուլերի ու ոլորտների՝ հիմքում դնելով հանրակրթության պետական նոր չափորոշչի պահանջները: Սահմանել եմ հիմնական գերակայությունները, մշակել՝ կատարման համար անհրաժեշտ գործողություններն ու միջոցառումները ,սահմանել հիմնական ռազմավարություն, գնահատել եղած և անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական միջոցները:

- Նպատակների և խնդիրների լուծման հիմքում դնել «Կրթության զարգացման պետական ծրագիրը»
- Հանրակրթության պետական նոր չափորոշչի պահանջներով առաջնորդվելը
- Սահմանել հիմնական գերակայությունները, մշակել կատարման համար անհրաժեշտ գործողություններն ու միջոցառումները
- Սահմանել հիմնական ռազմավարություն, գնահատել եղած և անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական միջոցները
- Սահմանել ֆինանսատնտեսական գործունեություն, նախանշել ծրագրի իրականացմանն ակնկալվող արդյունքները
- Վերահսկողության մեխանիզմների սահմանումը

Ուսումնական հաստատության գործունեությունը

- **Դպրոցի հասցեն** - ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Սևան Չարենցի 4
- **Դպրոցի անվանումը** - «ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի N4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
- **Դպրոցի ինտերնետային կայքի հասցեն** - sevan4.schoolsite.am
- **Էլեկտրոնային փոստ** – sevan4@schools.am
- **Հեռախոս** – 0261-2-41-22

ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի N4 հիմնական դպրոցի շենքը կառուցվել է **1976** թվականին:
«ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի N4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է՝ 03.12.2002թ. ,գրանցման թիվ՝ 35.210.0096 : Ուսումնական հաստատությունը գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ և դպրոցի կանոնադրությամբ:

Ուսումնական հաստատության գործունեության նպատակը յուրաքանչյուր երեխայի, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ), զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է: Ուսումնական հաստատության տեսլականն է՝ քաղաքակիրթ, ստեղծագործ ,նախաձեռնող , մրցունակ, ժամանակին համահունչ քայլող սերունդ կրթելն է : Ուսումնական հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, անձի ազատ զարգացման, ինչպես նաև ազգային և համամարդկային արժեքների պահպանման վրա:

Դպրոցն իրավունք ունի իրականացնելու տարրական և հիմնական ընդհանուր կրթական ծրագրեր՝ աշակերտների հետևյալ սահմանչափերով.

Դպրոցի կողմից իրականացվող ընդհանուր կրթական ծրագրերը

Համաձայն ՀՀ ԿԳ նախարարի 01.07.2010թ.-ի N 683-Ա, 684-Ա, 685-Ա հրամանների դպրոցը ստացել է իրավունք իրականացնելու կրթական ծրագրեր՝ ըստ համապատասխան սահմանային տեղերի՝

- **Տարրական ընդհանուր կրթական առաջին աստիճան – 200 սահմանային տեղ ՝ լիցենզիա № 0417**
- **Հիմնական ընդհանուր երկրորդ աստիճան – 250 սահմանային տեղ՝ լիցենզիա № 0410**

Դպրոցը ունի ՀՀ զինանշանի պատկերով հայերեն անվամբ կլոր կնիք և ձևաթղթեր:

<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի N 4 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող ,իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող,հանրակրթական հիմնական դպրոցի ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է:
Դպրոցը գործում է մեկ հերթով և հինգօրյա աշխատանքային ռեժիմով:

2022-2023 ուստարվա դասարանների և սովորողների թիվը

Դաս	Դասարանների քանակ	Սովորողների թիվ
I	2	36
II	1	28
III	2	36
IV	1	25
V	1	31
VI	1	29
VII	2	40
VIII	2	43
IX	2	41

Ընդամենը	14	309

2023-2024 ուստարվա սեպտեմբեր ամսվա դասարանների և սովորողների թիվը

Դաս	Դասարանների քանակ	Սովորողների թիվ
I	1	23
II	2	36
III	1	27
IV	2	37
V	1	27
VI	1	33
VII	1	28
VIII	2	43
IX	2	42
Ընդամենը	13	296

o Դպրոցի գործունեությունը՝ կրթական կարիքների նկարագրություն

Ցանկացած ուսումնական հաստատություն պետք է հասարակության որոշակի կրթական կարիքները բավարարի:ԵՎ այս պահանջմունքն էլ դպրոցին ստիպում է ,որ կրթական կարիքների բավարարման ուղղությամբ նպատակային և արդյունավետ լուծումներ գտնի :Մեզ տեղ պետք է հատկացվի տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմանը կրթության բնագավառում:Հետևաբար,անընդհատ տեղի ունեցող փոփոխությունների և նորարարությունների դարաշրջանում կարևոր է այդ գործընթացի համար ճկուն կառավարման աշխատանքների կազմակերպումը:Դրա համար մանկավարժական կազմը պետք է տիրապետի ժամանակակից դասավանդման մեթոդներին ,անընդհատ վերապատրաստվի մասնագիտական առաջխաղացման գործում:Դպրոցը պետք է էլեկտրոնային ուսումնական նյութերի,պաշարների և ուսումնական գրականության որակական բարելավումը ուշադրության կենտրոնում պահի:Դպրոցը կառավարման ու խորհրդակցական մարմինների ,համայնքի և այլ շահառուների հետ համագործակցային միջավայրի դաշտ պետք է ստեղծի:Ինչպես նաև ամրապնդի դպրոց -համայնք,դպրոց-ընտանիք,դպրոց-աշակերտ կապերը:Կրթական կարիքների ուսումնասիրությունը թույլ է տալիս վերլուծել անհատի գործունեությունը որոշող սուբյեկտիվ գործոնները ,ուսումնասիրել ամենակարևոր խթաններն ու պայմանները: Կրթական կարիքը նպաստում է մարդուն մշակութային կյանքին մոտենալուն և ճանաչելուն:
Ներկայումս ինքնակրթությունը դարձել է առաջին նախապայմաններից մեկը, քանի որ առանց ինքնակրթվելու մարդը չի կարող ինքնահաստատվել:Դպրոցը ուսուցման և դաստիարակության միջոցով պետք է ունենա՝

- ✓ **մասնագիտորեն կողմնորոշված**
- ✓ **համակողմանիորեն զարգացած**
- ✓ **ինքնուրույն կյանքին պատրաստ քաղաքացի:**

Դպրոցը իր գործունեությամբ պետք է կատարի հետևյալ ուսումնադաստիարակչական աշխատանքները՝

- ✓ **աշակերտների կրթական կարիքների գնահատում**
- ✓ **սովորողին տալ հիմնարար գիտելիք**
- ✓ **երաշխավորել սովորողների ազատությունը**
- ✓ **ուսումնառության ընթացքում զարգացնել ստեղծագործական աշխատանքներ կատարելու կարողությունը**

- ✓ **պետք է հաշվի առնել սովորողների տարիքային առանձնահատկությունները**
- ✓ **չափորոշիչներին համապատասխան և համընդհանուր ներառական կրթության կազմակերպում**
- ✓ **կրթության որակը բարելավելու համար, ուսուցման նորարարական մոտեցումների և նոր առավել արդյունավետ ուղղությունների ներդնում**
- ✓ **ավանդույթներով հարուստ մեր բազմամյա պատմությունը պետք է սովորողին մատչելի և հասանելի ձևով մատուցվի,որպեսզի առաջացնի հետաքրքրություն նորի և անցյալի նվաճումների նկատմամբ:**
- ✓ **ուսուցման նորարարական մոտեցումների ներդրումով պետք է կրթության որակը շարունակաբար բարելավել :**
- ✓ **ձևավորել 21-րդ դարի կարողունակ քաղաքացի :**

Կրթության կարիքների բավարարման համար պետք է իրականացվեն վարչատնտեսական աշխատանքներ՝

- ✓ **ուսումնական հաստատության շենքային պայմանների բարելավում**
- ✓ **ուսումնական գույքի,ժամանակակից ՏՀՏ_ների շարունակական արդիականացում**
- ✓ **ինտերնետ կապի որակյալ հասանելիության ապահովում**
- ✓ **մարզադահլիճների ,լաբորատորյաների և գրադարանների ,նորարարական ոճով կահավորված անհատական և թիմային աշխատանքների համար պայմանների ապահովում**
- ✓ **սովորողների սննդի կազմակերպում**
- ✓ **արտադասարանական խմբակների և դասընթացների ծավալների ընդլայնում**
- ✓ **զարգացման ծրագրի իրականացման վերահսկողություն**

Վերոնշյալ գործողությունների իրականացումը նպաստելու է աշակերտների զարգացմանը ,բավարարելով կրթական կարիքները՝ սահմանելով կրթության որակի բարձրացման և ազգային դպրոցի գլխավոր նպատակի իրականացման ուղիները,ձևավորի հարգանք անցյալի նվաճումների նկատմամբ:

Համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին.համայնքի,շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին

Դպրոցը ձգտում է դաստիարակել ու կրթել աշակերտներին այնպես,որ նրանց մեջ սերմանի ազնվություն, լավատեսություն,հավատարմություն և առաջ գնալու ձգտում:Դպրոցի գլխավոր նպատակն է այս ժամանակակից աշխարհում աշակերտին դարձնել ավելի մրցունակ և դժվարությունները հաղթահարող քաղաքացի:Դպրոցը ձգտում է շրջանավարտներին ապահովել ակադեմիական հիմքով, որն էլ խթան կհանդիսանա ընդունվել իրենց նախընտրած հաստատությունները, աչքի ընկնել և առաջ գնալ ի շնորհիվ ունեցած գիտելիքների:Պետության կայուն հենքը՝ ազգային դպրոցն է ,որի նպատակը ազգային մշակույթի ամրապնդումն ու արժեքների պահպանումն է : Դպրոցում պետք է ստեղծել այնպիսի միջավայր ,որտեղ մեկը մյուսին գնահատում և հարգում են :Ի շնորհիվ ուսուցիչ-աշակերտ-ծնող խմբերի ազնիվ ,հոգատար համագործակցության, զարգացման ծրագիրը կունենա իրատեսական շոշափելի արդյունք : Դպրոցի գործունեությունը համապատասխանում է ՀՀ կրթական քաղաքականությանը,ոլորտը կարգավորող օրենսդրությանը և դպրոցի կանոնադրությանը :Դպրոցի գործունեության համար հիմք են հանդիսանում համապատասխան օրենքները ,նորմատիվային իրավական ակտերը ,<<Կրթության մասին >>օրենքը,<<Կրթության զարգացման պետական ծրագիրը>>,<<Երեխայի իրավունքների մասին >> օրենքը,Դպրոցի կանոնադրությունը,<<Հանրակրթության պետական չափորոշիչ>> և այլ օրենքներ ու կարգեր:Դպրոցը պետք է ձգտի ակտիվ համագործակցել համայնքի հետ:Ծնողական համայնքը ի շնորհիվ դասղեկների, ակտիվ գործունեության միջոցով մշտապես տեղեկանում է դպրոցում առկա խնդիրների ու դրանում տիրող սոցիալ-հոգեբանական միջավայրին :Ուժեղ և աչքի ընկնող է այն համայնքը ,որն ունի լավ ,որակյալ կրթություն ապահովող դպրոց,քանի որ դպրոցում ձևավորված սովորողը ապագայ կերտողն է :Անհրաժեշտ է ,որ հաճախակի կազմակերպվեն հանդիպումներ ուսուցիչների ,աշակերտների և ՏԻՄ մարմինների ներկայացուցիչների հետ,որի արդյունքում կբարձրաձայնվեն այն խնդիրները ,որի լուծումը կարող է տալ համայնքը,ներառելով դպրոցի ներուժը խնդիրները լուծելու համար:Ի շնորհիվ ԿԳՄՄՆ-ի մշտապես վերահսկման ,դպրոցը իր գործունեությունը ապահովում է օրենքի շրջանակում թույլ չտալով շեղումներ:

Դպրոցը հենց ինքը պետք է ակտիվ լինի և շահագրգռված համագործակցելու պետության կողմից կազմակերպվող ճանաչողական միջոցառումներին ,մրցույթներին, որոնք կնպաստեն մանկավարժական,ծնողական և աշակերտական կազմի զարգացմանը :Դպրոցի զարգացման ծրագիրը խթան պետք է լինի աշակերտների ,ծնողների ,ուսուցիչների և դպրոցի բոլոր շահառու սուբյեկտների համար ,որի տեսլականը պետք է լինի լավ կրթություն ապահովելով մարդ-անհատ ձևավորելը:

Դպրոցի գործունեության համապատասխանությունը իր ենթակառուցվածքներին ,մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին

Դպրոցի ենթակառուցվածքային ապահովվածությունը բավարար է կանոնավոր դասապրոցեսներ կազմակերպելու համար :Դպրոցի ջրամատակարարումը և էլեկտրամատակարարումը կատարվում է շուրջօրյա ,գործում է կենտրոնացված կոյուղային համակարգ ,առկա է 10 սանհանգույց ,որոնք ունեն մասնակի վերանորոգման կարիք :Դպրոցում ջեռուցումը ապահովվում է գազով վառարաններով ,դասասենյակների ջերմաստիճանի ցուցանիշը համապատասխանում է առողջապահության նախարարության կողմից սահմանած նորմերին՝ 18-20 ցելսիուս ջերմաստիճան ,իսկ մարզադահլիճում՝ 17-19 աստիճան ցելսիուսից ցածր է լինում ջերմաստիճանը :
Տնօրենության , ՄԿԱ գծով տեղակալի, խորհրդակցական մարմինների անդամների, դասղեկների,իրավապահ մարմինների կողմից հետևողական աշխատանքներ են տարվում սովորողների իրավունքների և պարտականությունների կատարման և արդյունավետ իրականացման ուղղությամբ: Կազմակերպվում են առանձին հանդիպում-քննարկումներ, որոնց շրջանակներում հատուկ ուշադրություն է դարձվում բուլինգի (այդ թվում՝ մեդիայի միջոցով), օտարման և բռնության դրսևորումների բացառմանը:

2012 թվականից դպրոցը ընդգրկրվել է պարենի համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ իրականացվող <<Դպրոցական սնունդ>> ծրագրում, որի շրջանակներում կազմակերպվել է տարրական դպրոցի սովորողների համար ամենօրյա տաք սննդի ապահովում:

2023 թվականին <<Հայ դպրոց >>հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում թարմացվել է թվով 6 դասարանի գույք (սեղան, աթոռ,պահարան,ուսուցչի սեղան):

<<Երիտասարդությունը ներգրավված հասարակության մեջ>> դպրոցական բանավեճի ծրագրի ակտիվ համագործակցություն և հաղթանակների ձեռք բերում :

Ուսուցիչներն անցնում են համապատասխան վերապատրաստումներ և ատեստավորված են, համապատասխանում են հիմնական դպրոցում դասավանդելու չափանիշներին: Ունենք տարակարգ ունեցող 2 ուսուցիչ:

023-2024 ուստարուց դպրոցի 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարանների ուսումնական պլանը կազմվելու է ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշմամբ : Նոր ուստարում այդ դասարաններում դասավանդող ուսուցիչները անցել են համապատասխան վերապատրաստում:

Համայնքի և ուսումնական հաստատության համագործակցությունը ակտիվ փուլում է : Զարգացման ծրագրի հիմնախնդիրներից մեկն է՝ ակտիվացնել համայնքի և ուսումնական հաստատության կապը ,ապահովել տաղանդաշատ աշակերտների մասնակցությունը միջոցառումներին ,կազմակերպել հանդիպումներ ,սեմինար-քննարկումներ,ճանաչողական էքսկուրսիաներ ,արշավներ ,շաբաթօրյակներ ,որոնք կնպաստեն սովորողների սոցիալ-քաղաքացիական պատասխանատվության և կարողունակության զարգացմանը,սովորողների մոտ վաղ տարիքից ձևավորելով պետության և համայնքի նկատմամբ ուշադրություն և հոգատար վերաբերմունք : Հանդիպումներ կազմակերպել վաստակաշատ ուսուցիչների և հաջողությունների հասած շրջանավարտների հետ : Զարգացման ծրագրի, համայնքի և շահառու խմբերի կարիքներին համապատասխանությունն ապահովելու նպատակով իրականացվել են քննարկումներ և մտքերի փոխանակում մանկավարժական ,ծնողական և աշակերտական խորհուրդների հետ :Ուսումնական հաստատության և պետության կրթական քաղաքականության միտումներն ուղղված են աշակերտի որակական հատկանիշների բարձրացմանը:Համայնքի շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին ծանոթանալով `աշակերտը իրեն ավելի կայացած և արժևորված պետք է զգա :

Դպրոցի շենքը տիպային է , կազմված երկհարկ յոթ մասնաշենքից ,որոնք միացված են միջանցքով : Դպրոցն ունի ընդարձակ մարզադահլիճ: Դպրոցն ունի ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության լաբորատորիաներ (կարիք ունեն վերանորոգման և համապատասխան նյութերով ապահովման):

Դպրոցում առկա արհեստանոցները չեն գործում և ունեն վերանորոգման և նորագույն տեխնոլոգիաներով վերազինման կարիք :Դպրոցը նախատեսված է 1185 աշակերտի համար:

Դպրոցում կա վերանորոգված ,լուսավոր և ընդարձակ ճաշարան: Ճաշարանը 2020թ ՀՊԾ աջակցությամբ համալրվեց անհրաժեշտ գույքով ու սարքավորումներով:Ներկայումս ծրագիրը շարունակվում է ՀՀ Կառավարության աջակցությամբ <<Կայուն դպրոցական սնունդ>>ծրագրի շրջանակներում:

Դպրոցում կա առանձնացված բուժկետ, որը ապահովում է ուսուցիչների և աշակերտների կարիքները :

Դպրոցն աշխատում է հնգօրյա աշխատանքային շաբաթով ,օրինակելի ուսումնական պլանի հիման վրա՝ տնօրենի կողմից հաստատված ուսումնական պլանով , տարեկան ուսումնադաստիարակչական աշխատանքային պլանով ,որի հիման վրա դպրոցի մյուս օղակները պլանավորում են իրենց աշխատանքները:
Տնօրենը պետք է մարդկային ռեսուրսների յուրաքանչյուր տարրի հետ ծավալի համապատասխան գործունեություն ,որի արդյունքում կձևավորվի որակյալ կրթական համակարգ:Այսպիսով կարելի է գալ այն եզրահանգմանը ,որ դպրոցի ենթակառուցվածքների զարգացումը և մարդկային ռեսուրսների կառավարումը պետք է լինի տնօրենի մշտական ուշադրության կենտրոնում,քանի որ դրանց արդյունավետ կառավարումը խթան է հանդիսանում դպրոցում գիտելիքի որակի բարձրացմանը:Տնօրենը իր գործունեության ընթացքում համագործակցելով համակարգողի հետ պետք է աշխատի դպրոցի թերությունները նվազեցնել:

<u>Ուսումնական հաստատությունն ունի 46 աշխատակից :</u>

Վարչական աշխատողներ՝

- *Տնօրեն – 1*
- *Տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ – 1*
- *Մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ - 1*

Մանկավարժական աշխատողներ՝

- *Ուսուցիչ – 27*
- *Դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ - 1*

- *Լաբորանտ - 1*
- *Գրադարանավար - 1*
- *Ուսուցչի օգնական – 4*

Ուսուցիչների տարիքային բաշխվածություն՝

- *25-30տ. – 3 ուսուցիչ*
- *31-40տ. – 11 ուսուցիչ*
- *41-55տ. – 10 ուսուցիչ*
- *56-72տ. – 3 ուսուցիչ*

Ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմ՝

- *Հաշվապահ -1*
- *Համակարգչի օպերատոր - 1*
- Համակարգող - 1
- *Հավաքարար - 3*
- *Պահակ - 3*

- Կառավարման խորհուրդը կազմված է 9 անդամից:
- Ծնողական խորհուրդը կազմված է 13 անդամից:
- Աշակերտական խորհուրդը կազմված է 12 անդամից:

Խորհրդակցական մարմիններն ունեն կանոնադրություն,աշխատանքային պլաններ,գործում են օրենքով նախատեսված իրավասությունների սահմաններում:
Դպրոցը ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

2. Ուսումնական հաստատության իրավիճակի վերլուծություն ուժեղ և թույլ կողմեր

2.1 Ուսումնական հաստատության շենքային պայմանների վերլուծություն	
Ուժեղ	Թույլ
• Դպրոցը տիպային է ,միմյանց փողկապակցված են 7 մասնաշենքերով :Դպրոցն ունի ավտոտնակ :Նախագծված է 1185 աշակերտի համար:Շենքը շահագործման է հանձնվել 1976թ.: Ընդհանուր մակերեսը 6149.8 ք.մ. է :	• Դպրոցը չունի արտաքին լուսավորություն : • Դպրոցի շենքը հիմնանորոգման կարիք ունի : • Դպրոցի տանիքը վերանորոգման կարիք ունի : • Դպրոցը չունի պահակակետ: • Դպրոցը ապահովված չէ լոկալ ջեռուցման համակարգով : • Դպրոցում ջեռուցումը ապահովվում է միայն վառարանների միջոցով : • Դպրոցի բոլոր պատուհանները նորով փոխարինելու կարիք ունեն : • Դպրոցը չունի տեսախցիկներ:
• Դպրոցի տարածքը ցանկապատված է և սովորողների տեղաշարժի համար անվտանգ միջավայր է :Ավտոճանապարհային գոտուց անջատվում է ցանկապատով:	• Դպրոցի բակում չկան նստարաններ • Դպրոցի բակում չկա ցայտաղբյուր: • Դպրոցի բակը խորդուբորդ է ,ունի ասֆալտապատման կարիք:
• Դպրոցն ունի գեղեցիկ, կանաչապատ տարածքներ:Դպրոցն ունի մրգատու ծառերով առանձնացված տարածք : Հողը բնական կավային է, խոնավ և համապատասխանում է գյուղատնտեսական մշակաբույսեր աճեցնելու և մշակելու համար:	• Դպրոցի այգիները չեն թարմացվում և նորացվում բազմատեսակ ծառատեսակներով ու թփերով: • Բանջարանոցի առկայության կարիք կա : • Մրգատու ծառերը չեն մշակվում:

• Դպրոցի հետնամասում առկա է մարզադաշտ: • Ֆիզկուլտուրայի դասերը (ըստ եղանակային պայմանների) անցկացվում են մարզադաշտում:	• Մարզադաշտն ունի վերանորոգման կարիք : • Ֆուտբոլի համար նախատեսված դարպասը ցանցեր չունի: • Մարզադաշտը ցանկապատված չէ : • Մարզադաշտում չկան նստարաններ:
• Առկա է շարժողական խնդիրներ ունեցող սովորողների համար թեքահարթակ, անմիջապես մուտքի մոտ :	• Դպրոցի սանհանգույցները հարմարեցված չեն շարժողական խնդիրներ ունեցող երեխաների համար:
• ԱԻՆ-ի, շտապօգնության և այլ տեսակի տրանսպորտային միջոցների ելք ու մուտքի շարժման համար արգելքներ չկան : • Առկա են պահուստային ելքեր: • Էվակուացիոն տարհանման ելքերի և մուտքերի թիվը - 6 • Դպրոցը ունի արտակարգ իրավիճակներում հրշեջների ազատ ելք ու մուտքի հնարավորություն : • Դպրոցում առկա է կրակմարիչների ցուցատախտակ: • Դպրոցում առկա թվով 10 սանհանգույցները վերանորոգված են (վերանորոգվել են 2006թ.,համայնքապետարանի միջոցների հաշվին).առանձնացված են `տղաների,աղջիկների և աշխատակազմի համար :Որտեղ էլ ապահովված է շուրջօրյա ջրամատակարարում: • Հաստատության շենքերում ամեն օր իրականացվում է ընթացիկ խոնավ մաքրում ,իսկ ամիսը մեկ անգամ կատարվում է շենքերի հիմնական մաքրում:	• Դպրոցի ապաստարանը վերանորգված և կահավորված չէ : • Դպրոցի ապաստարանը չի գործում : • Հաստատությունում առկա լվացարաններում բացակայում է տաք ջուրը : • Դպրոցի թվով 3 սանհանգույցները ունեն վերանորոգման կարիք :
• Դպրոցում առկա է վերանորոգված ճաշարան,խոհանոց և սննդի պահեստ: • Ճաշարանը ջեռուցվում է վառարանների միջոցով	• Օդափոխման համակարգեր չկան: • Ճաշարանը կարիք ունի լոկալ ջեռուցման

• Դպրոցում առկա է բուժկետ `հագեցած առաջին բուժօգնության պարագաներով :	• Դպրոցի բուժկետը ապահովված չէ դաստակային կամ ոտնակային կառավարման լվացարանով : • Դպրոցի բուժկետը չի ջեռուցվում: • Բուժկետը վերանորոգված չէ:
• Դպրոցն ունի 1 հանդիսությունների դահլիճ:	• Հանդիսությունների դահլիճը չի ջեռուցվում: • Հանդիսությունների դահլիճը վերանորոգման և գույքի թարմացման անհրաժեշտություն ունի : • Հոկտեմբերից մինչև ապրիլ ամիսները հանդիսությունների դահլիճը չի օգտագործվում:
• Դպրոցն ունի 1 ընդարձակ սպորտդահլիճ (առանձնացված 2 հանդերձարաններով և գույքի պահման համար նախատեսված սենյակով):	• Սպորտդահլիճը և հանդերձարանները վերանորոգման կարիք ունեն: • Ջեռուցված չէ :
• Դպրոցը ապահովված է ջրահեռացման համակարգով :	• Ձմռան ամիսներին համակարգը մասամբ է աշխատում:
• Դպրոցն ունի առարկայական կաբինետներ `ՆԶՊ-ի,շախմատի,ինֆորմատիկայի,տեխնոլոգիայի,1 մասնագիտական կողմնորոշման:	• Դպրոցում առկա առարկայական կաբինետները ունեն վերազինման, վերանորոգման և ջեռուցման կարիք : • Տեխնոլոգիայի կաբինետում չկան գործառնական գոտիավորում համապատասխան կահավորում և հոսող սառը և տաք ջուր :
• Առանձնացված է քիմիայի,ֆիզիկայի և կենսաբանության լաբորատորիաներ :	• Լաբորատորիաները վերանորոգված չեն : • Լաբորատորիաները չեն ջեռուցվում: • Լաբորատորիաները ունեն համապատասխան սարքավորումների և նյութերի թարմացման և վերազինման կարիք :
• Դպրոցն ունի առանձնացված 5 արհեստանոց:	• Դպրոցի արհեստանոցները վերանորոգված չեն: • Արհեստանոցները նոր ժամանակներին համապատասխան սարքավորումներ և գործիքներ չունեն:
• Դպրոցն ունի 30 դասասենյակներ: • Դպրոցի ձախակողմյան և աջակողմյան դասասենյակները հիմնականում արևկող են :	

	• Դպրոցի դասասենյակներում լուսամփոփներով լուսավորման համակարգը թերի է : • Դասարանները ջեռուցվում են վառարաններով : • Դասասենյակների պատուհանները նորով փոխարինելու կարիք ունեն:

2.2 Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազայի վերլուծությունը	
Ուժեղ	Թույլ
• **<u>Գրադարանի ֆոնդում առկա է</u>** ` ➢ 5502 կտոր գեղարվեստական գիրք ➢ 271 կտոր տեղեկատվական (ատլասներ,բառարաններ,հանրագիտարաններ)գիրք ➢ 967 կտոր ուսումնամեթոդական գիրք ➢ 957 կտոր ամսագիր Նոր գրականությամբ վերջին անգամ գրադարանային ֆոնդը համալրվել է 2016 թվականին: • **Դպրոցում առկա է ընդհարձակ և լուսավոր ընթերցասրահ համապատասխան գույքով (30 նստատեղով)** • **<u>Համակարգչային դասասենյակում առկա են</u>** ` ➢ 10 համակարգիչ ➢ 2 նոթբուք ➢ 2 տպիչ ➢ 1 սկաներ ➢ 2 բազմաֆունկցիոնալ սարք • **<u>Դպրոցում առկա է 2023թ. <<Հայ դպրոց>> հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում՝</u>** ➢ Փոքր չափի աշակերտական սեղան-աթոռ — 61 կոմպլեկտ ➢ Միջին չափի աշակերտական սեղան-աթոռ — 32 կոմպլեկտ ➢ Ուսուցչական աթոռ — 6 հատ ➢ Գրատախտակ – 12 հատ ➢ Միջին չափի գրապահարան – 6 հատ	• Գրադարանային ֆոնդը թարմացված և նորոգված չէ : • Ինտերնետային կապի բացակայություն • Ժամանակակից գեղարվեստական և այլ գրքերով համալրման կարիք ունի : • Չկան ՏՀՏ տարբեր սարքավորումներ՝ տեսաերիզներ, աուդիոնյութեր համակարգիչներ, սկաներ և տպիչ, պատճենահանման սարքեր: • Ընթերցասրահը ջեռուցվում է գազի վառարանով : • 6 համակարգիչ-Pentium 3 մոդելի(կիսով չափ են աշխատում) : • 2 համակարգիչ-Pentium 4 մոդելի(կիսով չափ են աշխատում): • 3 համակարգիչ – ժամանակակից : • Բացակայում են շերտավարագույրներ: • Համակարգչային դասասենյակը վերանորոգված չէ: • Ինտերակտիվ գրատախտակ չունի: • Մշտական ինտերնետային կապ չկա: • Չունի կախովի պրոեկտոր: • Սովորողները և ուսուցիչները քիչ են օգտվում ՏՀՏ գործիքներից: • Համակարգիչների սակավության և ինտերնետ կապի թերացման պատճառով ուսուցիչները հիմնականում էլեկտրոնային դասամատյանը լրացնում են տանը:

➢ Կախիչ 12 տեղանոց – 6 հատ • **Սպորտդահլիճում առկա են նոր սպորտային գույք և սարքավորումներ** ` ➢ ցատկերի սարք ➢ մագլցման պարաններ ➢ պտտաձող ➢ սեղանի թենիս ➢ օղակներ  • **Դպրոցում առկա է ամբողջական կահավորված խոհանոց`** ➢ 1 գազօջախ ➢ 1 խմոր հունցող սարք ➢ 1 սառնարան ➢ 1 էլեկտրական ջրատաքացուցիչ ➢ 1 վառարան • **Արհեստանոցում առկա են `** ➢ 2 շաղափող ➢ 1 էլեկտրասրաքար ➢ 1 էլեկտրական կլորասղոց ➢ Այլ ուսումնական նյութեր և պարագաներ	• Սպորտդահլիճը վերանորոգված չէ: • Սպորտ դահլիճը ջեռուցված չէ: • Աղջիկների և տղաների համար առանձնացված հանդերձարանները վերանորոգված չեն: • Խոհանոցն ունի սպասքի թարմացման կարիք : • Դպրոցի արհեստանոցը վերանորոգված և կահավորված չէ : • Արհեստանոցում առկա նյութատեխնիկական բազան կարիք ունի թարմացման:

2.3 Հ աստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծություն

Դպրոցում գործում են կոլեգալ կառավարման մարմինը՝ խորհուրդը ,խորհրդակցական մարմինները ՝մանկավարժական խորհուրդ ,մեթոդական միավորումներ, ծնողական խորհուրդ,աշակերտական խորհուրդ ,որոնք նպաստում են դպրոցի կայուն և անխափան գործունեությանը:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2021թ.-ի մայիսի 10-ի N 245- Ա որոշմամբ հաստատվել է դպրոցի խորհուրդը ՝9 անդամներից բաղկացած:Խորհրդի գործունեությունը միտված է դպրոցի բնականոն զարգացմանը:Կառավարման խորհուրդը ամեն ուսումնական տարվա և երկրորդ կիսամյակի սկզբներում հավանություն է տալիս հաստիքային և տարիֆիկացյոն ցուցակներին :Խորհրդի և տնօրենի համագործակցության ուղղությունները վերաբերում են ուսումնադաստիարակչական գործընթացին,կրթության որակին և բովանդակությանը ,կրթական ծրագրերի իրականացմանը ,դպրոցի զարգացման ծրագրի վերահսկմանը, ներքին գնահատման արդյունքներին,բյուջեի նախագծին ,տարիֆիկացիային ,հաստիքային ցուցակին,ամենամյա ծախսերի նախահաշվին ,դպրոցի կազմակերպական կառուցվածքին,սանիտարահիգիենիկ վիճակին ,երեխաների առողջության պահպանմանը:Կառավարման խորհուրդի գործունեությունը շատ կարևոր է դպրոցի համար,բայց ոչ միշտ են բոլոր անդամները արդյունավետ կերպով իրականացնում իրենց գործառույթները:Խորհրդի անդամները լիարժեք չեն տիրապետում իրենց պարտականություններին,նրանց մեծ մասը ոչ միշտ են մասնակցում տնօրենի ներկայացրած ուսումնական հաստատության ամենամյա ծախսերի նախահաշվիՆ:Խորհուրդը դպրոցի առաջընթացի հարցում պետք է շահագրգիռ լինի աջակցելով բոլոր նախաձեռնություններին ,բայց ցավով եմ նշում որ խորհրդի անդամների մեծ մասի համար խորհուրդը ընկալվում է որպես ձևական՝ ոչ կարևոր մարմին,ինչն էլ բերում է այն եզրահանգման ,որ կառավարման խորհրդի մասնակցությունը և հաշվետվողականությունը կառավարման համակարգում ձևական բնույթ է կրում:Խորհուրդը պասիվ է հերթական նիստերի անցկացման հարցում ,որը պարտադիր է քննարկելու այնպիսի կարևոր դրույթներ ,որոնք կան իրենց գործառույթներում :Իրենց անտարբերությունը հանգեցնում է նրան ,որ տնօրենը ստիպված է լինում երբեմն ինքն հանձն առնել խորհրդի անդամների գործառույթները ՝նրանց տեղյակ պահելով նիստերի անցկացման ,քննարկվելիք հարցերի մասին :Կառավարման արդյունավետությունը պայմանավորված է տնօրինության համագործակցային աշխատանքով, ըստ դպրոցի կանոնադրության համապատասխան դրույթների ,ի շահ դպրոցի

,մասնավորապես հետևյալ ուղղությունների՝ ֆինանսատնտեսական գործունեության արդյունավետ կազմակերպում,բյուջեի նախագծի մշակում և ամենամյա ծախսերի նախահաշվի քննարկում,ներքին և արտաքին գնահատման արդյունքների քննարկում,աշխատողների և սովորողների վարքագծի կանոնների մշակում,շահույթի տնօրինման առաջնային ուղղությունների որոշում ,հատկապես կարևորություն տալ գույքի և ուսումնական պարագաների ձեռք բերմանը: Կցանկանայի ,որ խորհուրդը իր պարտականությունները կատարի ,ինչպես որ հարկն է ,բացառելով ձևական կողմը:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Մանկավարժական խորհուրդը իրականացնում է դպրոցի կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթները ,ընդգրկված են 28 անդամ (1 ծնող): 2023-2024 ուստարում ձևավորվել է 13 դասարան :Ուսումնական տարվա սկզբում սովորում են 297 աշակերտ : Առկա են աշխատանքային պլանները և դասացուցակը :Դպրոցի աշխատանքները կատարվելու են համաձայն մանկավարժական խորհրդի առաջին նիստում հաստատված ուսումնադաստիարակչական աշխատանքային պլանի:Դպրոցի մանկավարժական խորհուրդը քննարկում է դպրոցի զարգացման ծրագիրը ,որից հետո ներկայացնում կառավարման խորհրդի հաստատմանը:Մանկավարժական խորհուրդը հանալրված է փորձառու և որակյալ մասնագետներով ՝27 դասավանդող ուսուցիչ ,ինչպես նաև տնօրեն ,վարչատնտեսական մասի համակարգող , տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ ,տնօրենի մասնագիտացված աջակցությունների գծով տեղակալ,սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների 1 կազմակերպիչ, զինղեկ ,4 ուսուցչի օգնականներ,1 լաբորանտ և 1 գրադարանավար:
Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվում են պարտադիր երկու ամիսը մեկ անգամ սահմանված ժամկետներում ,անհրաժեշտության դեպքում կարող են գումարվել արտահերթ նիստեր ,որին կարող են մասնակցել ծնողներ,աշակերտական խորհրդի անդամներ:
Յուրաքանչյուր նիստում պետք է քննարկվող հիմնական թեման լինի դպրոցի կրթական գործունեության կազմակերպման արդյունավետությանը ուղղված ուսումնական ծրագրերի կատարողականը :
Մանկավարժական խորհուրդը ընդունում է օրենքով իրեն լիազորված անհրաժեշտ որոշումները :Յուրաքանչյուր նիստ պարտադիր արձանագրվում է :Նիստերը անցկացվում են ժողովրդավարության սկզբունքներին համապատասխան,բոլորը ազատ են իրենց կարծիքը արտահայտելու կամ նոր առաջարկներ անելու հարցում:
Դպրոցում գործում է 3 մեթոդմիավորում .

- Հումանիտար առարկաների (գրականություն,հայոց լեզու,մայրենի,ռ.լեզու,անգլերեն,գերմաներեն,պատմություն,հայրենագիտություն,հայ.եկ.պատմ.,հասարակագիտություն)
- Տարրական (1-4-րդ դասարաններ)
- Բնագիտական առարկաների (ֆիզիկա,քիմիա ,կենսաբանություն,աշխարհագրություն,մաթեմատիկա,ֆիզիկական կուլտուրա,ռազմագիտություն,ինֆորմատիկա,շախմատ)

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

2023-2024 ուստարում ԱԽ-ում ներառված են 6-9-րդ դասարանի թվով 12 սովորողներ :Այն սովորողների ինքնավարության գործադիր մարմինն է ,որը գործում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան :Նիստերի արդյունքում հաստատվում են որոշումներ ԱԽ-ի կանոնադրության հաստատման թվակազմի ԱԽ-ի ձևավորման աշխատանքները համակարգող խմբի վերաբերյալ, ինչպես նաև դպրոցի շնորհալի աշակերտների ընդգրկվածության առաջնահերթությունը համայնքում և դպրոցում տեղի ունեցող միջոցառումներին : ԱԽ-ի նախագահը կարող է մասնակցել ՄԽ-ի որոշ նիստերի ,որոնք վերաբերվելու են աշակերտների կրթության բարելավման հարցերին : Աշակերտական խորհուրդը ժողովրդավարության և սկզբունքներին համապատասխան անմիջականորեն իրենց վերաբերող հարցերի մասին ազատորեն կարծիք չեն ներկայացնում դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմիններին ,որի ուղղությամբ պետք է աշխատանքներ տարվեն տնօրինության կողմից:Դպրոցում սահմանված է աշակերտական հերթապահություն, կազմակերպվում են տարաբնույթ միջոցառումներ: Աշակերտական խորհրդի նախաձեռնությամբ կատարվել են բազում միջոցառումներ նվիրված գիտելիքի օրվան,ուսուցչին,մայրության և գեղեցկության օրվան,աշնան ,անկախության ,ամանորի ,բանակի օրվան և այլ նշանավոր օրերին:Աշակերտները սիրում են իրենց դպրոցը ,կապված են ուսուցիչների հետ և դրա վառ օրինակը շրջանավարտների պարբերաբար այցելությունն է դպրոց : Ըստ զարգացման ծրագրի առաջնահերթ եմ համարում շրջանավարտների խորհուրդ ստեղծելը ,որը համոզված եմ , կլուծի բազում խնդիրներ, կյանքի կկոչի բազում ծրագրեր :

ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

2023-2024 ուստարում ծնողական խորհուրդը ձևավորվել է 13 անդամներից մեկ ուսումնական տարվա համար:Հանրակրթության դպրոցի ԾԽ-ն կազմավորվում է դասարանների ծնողական խորհուրդների նախագահներից :ԾԽ-ի նախագահը ընտրվում է փակ քվեարկությամբ ,ձայների պարզ մեծամասնությամբ:ԾԽ-ի նխագահը

մանկավարժական խորհրդի անդամ է :Այս ուսումնական տարում պետք է այնպես աշխատել ,որ թերությունները շտկվեն ,գրանցվեն ծնողների կողմից նորանոր առաջարկներ ուղղված կրթությանը և դաստիարակությանը: Ծնողական խորհուրդը պետք է նպաստի դպրոցի և ծնողների միջև կապի ամրապնդմանը:Համագործակցային միջավայրը պետք է ակտիվացնել ,որը կիսով չափ պասիվ փուլում էր գտնվում 2022-2023 ուստարում :Դասարանական ծնողական խորհուրդի նախագահներին ընտրելիս ցանկալի և պարտադիր պայման է ,որ տվյալ անձը լինի խելացի :Ըստ ձևավորված ,բանիմաց դասարանական խորհրդի նախագահներից կձևավորվի դպրոցական ամուր,նպատակասլաց և ողջունելի կորիզ:2023-2024 ուստարում ծնողկան խորհրդի անդամները նպատակասլաց են ,առաջարկել են բազում առաջարկություններ կապված աշակերտների մշակութային կյանքի զարգացման ,արտադասարանական և արտադասարանային միջոցառումներին ուղղված:Դպրոցը հզոր է ,երբ ունի բանիմաց ուսուցիչներ,գիտելիքը յուրացնող աշակերտներ և հոգաատար ,ուշադիր ծնողներ:

Դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների գործունեության վերլուծություն	
Ուժեղ	Թույլ
• Կառավարման խորհուրդը միշտ գործել է դպրոցի կանոնադրության և լիազոր մարմնի կողմից սահմանված կարգերով • Խորհուրդը հաստատում է ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի անցկացման կարգը: • Յուրաքանչյուր տարվա ավարտին խորհուրդն իր կազմից անդամներ է առաջարկում ներքին գնահատման աշխատանքներին մասնակցելու համար :	• Կառավարման խորհրդի անդամների մեծ մասի մոտ բացակայում է նիստերին մասնակցելու մոտիվացիան • ԿԽ-ի մասնակցությունը և հաշվետվողականությունը դպրոցի կառավարման համակարգում ձևական բնույթ է կրում • Խորհրդի անդամները չեն տեղեկացվում հանրակրթության ոլորտի օրենսդրական փոփոխությունների մասին • Մանկավարժական խորհրդի նիստերում չեն մասնակցում աշակերտական և ծնողական խորհրդի նախագահները (չեն տեղեկացվում)
• Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվում են ժողովրդավարության սկզբունքներին համապատասխան • Մեթոդմիավորումները մշտապես գործում են իրենց լիազորությունների սահմաններում	• Աշակերտական խորհրդի նախաձեռնությունները չեն խրախուսվում • Աշակերտական խորհուրդը պասիվ է ներքին կարգապահական կանոնների պահպանման գործում
• Աշակերտական խորհուրդը աչքի է ընկնում նախաձեռնողականությամբ և կազմակերպում հետաքրքիր միջոցառումներ • Աշակերտական խորհուրդը հանձնախմբերի միջոցով կանոնակարգում է իր աշխատանքները	• Ծնողական խորհրդի անդամ չհանդիսացող ծնողների հետ իրազեկման միջոցառումներ, հանդիպումներ, քննարկումներ չեն իրականացվում:

• Ծնողական խորհուրդը հաճախ է հանդես գալիս կարևոր և հետաքրքիր առաջարկություններով • Ծնողական խորհուրդը ակտիվ է արտադպրոցական և արտադասարանական միջոցառումներում • Ծնողական խորհուրդը պատրաստակամ է աջակցելու դպրոցում կազմակերպվող յուրաքանչյուր ծրագրերի	• Խորհրդակցական մարմինների և կառավարման խորհուրդի միջև համագործակցության բացակայություն :

2.4 Հաստատության համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների,ծնողական համայնքի,կրթության կառավարման մարմինների ,շահառու կազմակերպությունների հետ	
Ուժեղ	Թույլ
Դպրոցը իր գործունեության շրջանակում համագործակցում է • ԿԳՄՄՆ-Կառավարում և վերահսկողություն • Գեղարքունիքի մարզպետարան – ֆինանսավորում • ԿՏԱԿ (Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն)- հեռավար ուսուցում • ԴՏՀ (դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամ)-դասագրքերի բաշխման և հավաքման գործի կազմակերպում • ՏՄԱԿ (տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն)- մանկավարժահոգեբանական աջակցություն • <<Այբ>> կրթական հիմնադրամի հետ • Կրթության թերթի խմբագրություն ՓԲԸ – ուսուցչի թափուր տեղի մրցույթների տեղադրում • <<Հայկական կարմիր Խաչ>>-իրազեկվածության տրամադրում անվտանգության կանոնների շուրջ • ՀՀ Ոստիկանության տարածքային բաժին- օրենքների իրազեկում	• Չեն կազմակերպվում հանդիպումներ պետական իշխանության մարմինների ներկայացուցիչների , ճանաչված մտավորականների,արվեստի և մշակութային գործիչների, գրողների հետ: • Չկա համագործակցություն օտարերկրյա ուսումնական հաստատությունների հետ : • Պասիվ է <<Դասը վարում է ոստիկանը>> թեմայով հանդիպումները: • Ծնողական համայնքի հետ պասիվ է համագործակցությունը • Ծնողական խորհրդի նախագահը չի տեղեկացվում մանկավարժական խորհրդի նիստերի օրակարգի մասին • Համագործակցություն չկա դոնոր կազմակերպությունների հետ: • ՅՈՒՆԵՍԿՈՅԻ -ի <<ՈՒսումնառող քաղաքներ >>ցանցի հետ համագործակցություն չկա,(որի շնորհիվ ի հայտ են գալիս նորարարական նոր ծրագրեր՝ ներառականից մինչև հեռավար ուսուցում) • Չեն կազմակերպվում համադպրոցական ծնողական ժողովներ: • Երկարօրյա ուսուցման բացակայություն: • Բարերարների և բարեգործական հիմնադրամների բացակայություն:

Դպրոցի և համայնքի գործունեությունը

Դպրոցն իր ամենօրյա գործունեության ընթացքում պետք է համագործակցի համայնքի ,կրթամշակութային ,կրթության կառավարման մարմինների ,գործարարների և կրթական գործին նվիրյալ անձանց հետ :

Դպրոցը ակտիվ մասնակցություն ունի համայնքապետարանի կողմից կազմակերպվող միջոցառումներին:Համայնքի ներկայացուցիչները ակտիվ մասնակցություն ունեն դպրոցում կազմակերպվող բազմաբովանդակ միջոցառումներին,հատկապես ազգային տոներին և տոնակատարություններին ,ինչպես նաև այբբենարանի ավարտին նվիրված միջոցառումներին:Դպրոցի աշակերտների թիվը մեծ է համայնքի կողմից կազմակերպվող արտադպրոցական միջոցառումներին :Ունենք շնորհալի աշակերտներ, ովքեր աչքի են ընկել նկարչության ,երգի,պարի,ասմունքի բնագավառներում:

Դպրոցի գործունեության կարևորագույն էջերից մեկը համայնքի հետ սերտ համագործակցությունն է ,որը պետք է լինի միշտ ուշադրության և հետևողականության փուլերում:Դպրոցը պետք է աչքի ընկնի ի շնորհիվ իր դաստիարակած սանի ,որին պետք է կրթել և խրախուսել:

Ակտիվ համայնքապետարանը դպրոցի բացահայտման հայելին է :

Դպրոցի համագործակցությունը ծնողական համայնքի հետ:

Դպրոցում գործում է ծնողական խորհուրդ՝ 13 անդամներով :Ծնողական խորհուրդը ունի տարեկան աշխատանքային պլան:Դպրոցի ծնողական խորհուրդը իր ակտիվությունն է ցուցաբերում դպրոցում անցկացվող բոլոր միջոցառումներին և ծրագրերին:Ի շնորհիվ ծնողների նվիրվածության և հոգատար վերաբերմունքի ,դպրոցում բոլոր միջոցառումները ունենում են անթերի ընթացք և գեղեցիկ ավարտ: Դպրոցի ծնողական խորհուրդը պետք է միշտ իրազեկված լինի նոր օրենքների հրապարակումներով (կրթության որակը անվտանգության կանոնները,առողջապահական կանոնները բարձր և ճիշտ պահելու համար):

2021-2023 ուստարիներից սկսած դպրոցում ավանդույթ է դարձել <<Իմ ընտանիքը >> խորագրով միջոցառման անցկացումը ,որը միջազգայնորեն նշվում է մայիսի 15-ին:Այդ գեղեցիկ միջոցառման մասնակիցները դպրոցի ծնողներն են,ովքեր ընդգրկվում են կամավորության սկզբունքով և դպրոցի ԴԱԿ-ի կողմից կազմած ծրագրի ,անմոռանալի է դառնում օրն ու ժամանակը,տանելով անցյալ և միախառնում ներկային:

Դպրոցի համագործակցությունը կրթության կառավարման մարմինների հետ:

Դպրոցը համագործակցում է Կրթության կառավարման լիազոր մարմինների հետ:Ի շնորիվ լիազոր կառավարման մարմինների ուշադրության , դպրոցը իր բնականոն գործունեությունը ճիշտ է կազմակերպում , կառավարության ընդունած բոլոր հրամանները ,որոշումները և իրավական ակտերը ժամանակին կատարվում են դպրոցի կողմից:

Դպրոցը տարին մեկ անգամ իր գործունեության մասին տարեկան հաշվետվություն է ներկայացնում լիազոր մարմիններին՝ տարիֆիկացիա,նախահաշիվ ,դպրոցի արտաքին գնահատում:

Պասիվությամբ են հանդես գալիս ուսուցիչները,լիազոր մարմնի կողմից կազմակերպված կամավորության սկզբունքով իրականացվող միջոցառումներին:Տնօրինությունը պետք է շահագրգռի ուսուցիչներին,որպեսզի հետաքրքրություն և մասնակցություն ցուցաբերեն կազմակերպվող միջոցառումներին :

Դպրոցի համագործակցությունը շահառու այլ կազմակերպությունների հետ:

Սևանի N4 հիմնական դպրոցը համագործակցում է մի շարք շահառու կազմակերպությունների հետ,որոնք ներկայացված են վերը նշված աղյուսակի 2.4 ուժեղ կողմում:

<<Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն>>ծրագրի շնորհիվ տաք սննդից օգտվում են դպրոցի տարրական դասարանների 125 աշակերտներ::

Դպրոցը պետք է դառնա խոշորացված համայնքի անբաժանելի մաս:

Ըստ թվարկածների նպատակահարմար եմ գտնում առաջնային համարել հետևյալ ծրագրերը՝

- Կազմակերպել երկարօրյա ուսուցում տարրական և միջին դպրոցում ,ցածր առաջադիմություն ունեցող աշակերտների ուսման մակարդակը բարձրացնելու համար :
- Ամրապնդել դպրոց-համայնք համագործակցության մակարդակը ,բարձրացնել դպրոցի դերն ու նշանակությունը համայնքում
- Համագործակցության ապահովում անհատ բարերարների բարեգործական կազմակերպությունների և դոնոր կազմակերպությունների հետ ՝դպրոցի ուսումնական ծրագրերի և միջավայրի բարելավման համար:

2.5 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացումը	
Ուժեղ	Թույլ
• Թվով 27 ուսուցիչներ ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն : • Թվով 27 ուսուցիչներ ատեստավորված են : • Ըստ նոր չափորոշչի՝ ունենք վերապատրաստված ուսուցիչներ: (2-րդ,5-րդ,7-րդ դասարաններում պարապող ուսուցիչներ) • Բոլոր ուսուցիչները բավարար չափով տիրապետում են ՏՀՏ գործիքներին: • Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում կատարվում են, դասալսումներ: • ԿԳՄՍ նախարարության կողմից ստեղծված դասագրքերի համապատասխանությունը գնահատելու նպատակով առարկայական հանձնաժողովում (5-րդ,7-րդ,10-րդ դասարանների անգլերենի դասագրքերի գնահատումը ըստ չափորոշչի) ունենք ընդգրկված անգլերենի մեկ ուսուցիչ • Մանկավարժական կոլեկտիվը համախմբված է և սովորողների կրթության ու դաստիարակության համար ամուր օղակ է հանդիսանում • Դպրոցում կազմակերպվող յուրաքանչյուր միջոցառում լուսաբանվում է դպրոցի ֆեսբուքյան էջում • Ունենք ինֆորմատիկա առարկայի մեկ ուսուցիչ ով վերապատրաստող է և դասընթացներ վարող (հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների): • Դպրոցում դասղեկական ժամերը անցկացվում են ըստ ժամանակացույցի: •	• Չկա կամավոր ատեստավորմանը մասնակցած ուսուցիչ : • Դասպրոցեսներին քիչ են օգտագործվում ՏՀՏ գործիքներ: • Կարիք կա վերապատրաստման ՏՀՏ գործիքների օգտաագործման,ներառյալ ՝էլեկտրոնային նյութերի կիրառման ուղղությամբ : • Սկսնակ ուսուցիչների մոտ դասալսումները և խորհրդատվությունները պասիվ փուլում են: • Դպրոցում պասիվ փուլում է առարկայական ինտելեկտուալ դասերի և մրցույթների կազմակերպումը: • Դպրոցում նախագծային և հետազոտական աշխատանքներին ուշադրություն չի դարձվում: • Ուսուցիչները հաճախ հանդես չեն գալիս նորարարական նախաձեռնություններով:

Նշեմ նաև ,որ համավարակի պայմաններում ուսուցիչները բարելավվեցին իրենց կարողությունները ՏՀՏ-ի դաշտում և կարողացան պատշաճորեն իրականացնել հեռավար ուսուցում : Դպրոցում բոլոր ուսուցիչները աշխատում են ըստ իրենց մասնագիտացվածության ուղղվածությամբ ,ուսուցիչները պարբերաբար մասնակցում են տարբեր պետական և մասնավոր կազմակերպությունների կողմից կազմակերպված վերաապատրաստման միջոցառումներին :ՈՒսուցիչների զգալի մասը տիրապետում է դասավանդման աշակերտակենտրոն ,մասնակցային և ինտերակտիվ մեթոդներին :Դասալսումները,բաց դասերը , դաս-միջոցառումները ցույց են տալիս ,որ պետք է տարվեն աշխատանքներ մանկավարժական համակազմի մասնագիտական որակական հատկանիշների շարունակական բարելավման ուղղությամբ:Դպրոցում չկան գիտական կոչում ունեցող և մենթոր ուսուցիչներ :Ունենք երկրորդ աստիճանի տարակարգ ունեցող 2 ուսուցիչներ:Դասալսումները քննարկվում են մ/մ նիստերի ժամանակ ,թերություններն ու աառավելությունները բարձրաձայնելու,ուղղություններ տալու հետագայում լավ ցուցանիշներ գրանցելու և տեսնելու համար:Դպրոցում ՏՀՏ գործիքների հին և սակավ լինելու պատճառով տեսադասերը հաճախակի չեն կազմակերպվում ,որի ուղղությամբ պետք է աշխատանքներ տարվեն բարերարների միջոցով համալրել ՏՀՏ գործիքները նորերով և հետաքրքիր դարձնել յուրաքանչյուր առարկայի դասաժամ:Մեթոդմիավորման ղեկավարների կողմից կատարվել են դասալսումներ `բնագիտական առարկաներից 65 ժամ ,լեզուներ 38 ժամ ,տարրական դասարաններ 40 ժամ :Դպրոցն իր առաջ խնդիր է դրել բարձրացնել հատկապես՝ մաթեմատիկայի և բնագիտական առարկաների ուսուցման որակը ,ինչպես նաև վերահսկել բոլոր առարկաների դասավանդման գործընթացը : Որոշ մանկավարժներ պարբերաբար մասնակցում են վերապատրաստումների (կամավորության սկզբունքներով) բարելավելով իրենց գիտելիքների շտեմարանը, ինչպես նաև ձգտում են զբաղվել ինքնակրթությամբ :Սակայն հարկ է նշել, որ ուսուցիչները չեն ձգտում մասնակցել կամավոր ատեստավորմանը :Մանկավարժների մեջ կան նաև հին մոտեցումներով առաջնորդվող և նոր փոփոխություններին դժվար համակերպվողներ ըստ որի նրանք միշտ տնօրինության ուշադրության կենտրոնում են ,փորձելով խրախուսման անգամ ստիպելու մեթոդներով դուրս գան իրենց հին կաղապարներից ,տեսնելով հեշտ ,հետաքրքիր ,նոր մեթոդներով լի ուսումնական դաշտ:

2.6 Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորորարությունների ներկայացումը	
Ուժեղ	Թույլ
• Միայն ինֆորմատիկա առարկան է անցկացվում ՏՀՏ գործիքների միջոցով : • Ինֆորմատիկայի դասաժամերին կիրառվում է գիտելիքների ստուգման ինտերակտիվ թեստեր: • Ուսուցիչների 40%-ը մասնակցել է Google ամպային տեխնոլոգիաներ ինտերակտիվ դասերին: • Ուսուցիչները էլեկտրոնային մատյանների գրանցումները ժամանակին են կատարում/հիմնականում տանն են աշխատում/ • Kahoot,Book creator,Awwapp,Nearpod և այլ ծրագրերով են հաճախ դասերը անցկացնում /հիմնականում ինֆորմատիկայի դասաժամերին/ • Դպրոցն ունի առանձնացված ինֆորմատիկայի դասասենյակ համալրված 7հին(pentium 3 և4) և նոր մոդելի 3համակարգիչներով:	• Դպրոցում ՏՀՏ հին գործիքների անսարքության և նոր սերնդի գործիքների սակավության պաճառով դասապրոցեսներում քիչ են օգտագործվում: • Ստացած մեդիագրագիտության պասիվության ցուցաբերում: • Մանկավարժական համակազմի մեդիագրագիտության մակարդակը ունի զարգացման կարիք : • Դպրոցն ունի մեդիագործիքներով, որակյալ ինտերնետ կապով և կրթական ծրագրերում ՏՀՏ գործիքների հարստացման կարիք : • Համակարգիչները կարիք ունեն նորացման : • Նոր ՏՀՏ գործիքների բացակայություն : • Ինտերակտիվ ուսուցման գրատախտակների բացակայություն: • Դպրոցում չկա /Արմաթ / ինժեներական լաբորատորիա ,ուր կհաճախեն ոչ միայն դպրոցի այլ նաև ուրիշ հաստատությունների սովորողներ: • Թումո-տուփի առկայության անհրաժեշտություն/ ուր կհաճախեն ոչ միայն դպրոցի, այլ նաև ուրիշ հաստատությունների սովորողներ և լուրջ քայլ կլինի աշակերտների ապագա մասնագիտական կողմնորոշման հարցում/:

- Դպրոցը օգտվում է հետևյալ կայքերից՝

1. <<Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն >>պետական ոչ առևտրային կազմակերպություն:/ https://www.ktak.am//
2. <<Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն >>հիմնադրամ:/ https://www.spyur.am//
3. <<Պաշարների շտեմարան>>:/ https://lib.armedu.am/
4. <<Ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաներ>>:/ https://esource.armedu.am/
5. <<Էլեկտրոնային դասամատյան >>:/ https://emis.am/

